ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԾՁԲ-20-10/8-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **18 .03.2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Պատվիրատու», մի կողմից և «ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ե. Չիլինգարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ այսուհետև՝ «Կատարող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 09.12.2019թ. կնքված № ԳՀԾՁԲ-20-10/8-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Կատարողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ծառայությունների (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր **առավելագույն** գինը կազմում է **9,996,000 (ինը միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար)** ***ՀՀ դրամ*** **ներառյալ ԱԱՀ-ն**, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնած Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետով նախատեսված կարգով, **15 բանկային օրվա ընթացքում բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ.**:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Թումանյան 30-14
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 16600015287500100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02588589
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ե. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-10/8-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ծառայության անվանում	Առավելագույն գին /դրամ/	Գնման ժամանակացույց
1.	Ոչ վտանգավոր աղբի եվ թափոնների հեռացման եվ ոչնչացման ծառայություններ (բիոզուգարանների տեղադրման եվ սպասարկման ծառայություններ)	9,996,000	Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2020 թ. I-IV եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ.-ը:

*Ծառայություններն իրականացվում են ՊՆ զորամասերում նախատեսված առավելագույն գնի սահմաններում՝ համաձայն ՊՆ ԿՇ և ԱԲ հայտերի:

Ծառայության			
Հ/հ	Անվանումը Ոչ վտանգավոր աղբի և թափոնների հեռացման և ոչնչացման ծառայություններ (Բիազուգարանների տեղադրման և սպասարկման ծառայություններ), այդ թվում՝	Չափման միավորը	Յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գները՝ ՀՀ դրամ
1	Բիոզուգարանի տեղափոխում	1կմ	660
2	Կեղտահան մեքենայի կիրառմամբ բիոզուգարանի կեղտահանում	հատ	13200
3	Բիոզուգարանի տեղադրում (վարձակալություն)	հատ	33600
4	Բիոզուգարանի սպասարկում	հատ/օր	7200
5	Զուգարանի թղթի տրամադրում	հատ/օր	840
6	Խոնավ անձեռոցիկների տրամադրում	հատ/օր	1140
7	Ալկոգելի տրամադրում	հատ/օր	840
Ընդամենը			57,480

Հ/հ	Մարզ	գործակից	Հ/հ	Մարզ	գործակից
Ն		*1.0000*	6	Գեղարքունիք	1.0898
1	Երևան	1.0572	7	Վայոց Ձոր	1.0761
2	Արմավիր	1.0615	8	Լոռի	1.0893
3	Արարատ	1.07	9	Շիրակ	1.088
4	Արագածոտն	1.0679	10	Սյունիք	1.129
5	Կոտայք	1.0657	11	Տավուշ	1.132

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Գ. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ տնօրեն

Ե. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-20-10/8-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանում	CPV կոդ	Առավելագույն գին/դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝								
				Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ.
1.	Ոչ վտանգավոր աղբի եվ թափոնների հեռացման եվ ոչնչացման ծառայություններ (բիոզուգարանների տեղադրման եվ սպասարկման ծառայություններ)	90511160/505	9,996,000	3,332,000	3,332,000	3,332,000	6,664,000	6,664,000	6,664,000	9,996,000	9,996,000	9,996,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի անվամբ

_____ Ա. ՅՈՒՍՈՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԳՆԱՌՕ» ՍՊԸ Տնօրեն

_____ Է. ՉԻԼԻԳԱՐՅԱՆ